



**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ԱՄԲԻՈՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն Կանոնակարգը Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրության հիմնադրույթներին համապատասխան՝ սահմանում է Համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի կառավարման և ֆինանսների ամբիոնի (այսուհետ՝ Ամբիոն) կառուցվածքը, գործառույթները, կառավարման, գործունեության, պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման, վերակազմավորման և լուծարման սկզբունքները:
2. Ամբիոնը Համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի հիմնական կառուցվածքային ուսումնագիտական ստորաբաժանումներից է, որն իրականացնում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր, ուսումնամեթոդական, հետազոտական և կազմակերպչական աշխատանքներ՝ բարձրագույն և հետբուհական որակավորմամբ մասնագետների և գիտամանկավարժական կադրերի պատրաստման, նրանց որակավորման բարձրացման և վերաորակավորման նպատակներով:
3. Ամբիոնի իրավասությունները և գործունեության սկզբունքները սահմանվում են Համալսարանի և տնտեսագիտական ֆակուլտետի կանոնադրություններով, Գավառի պետական համալսարանի ամբիոնների կանոնակարգով և սույն կանոնակարգով:
4. Վերակազմավորման և լուծարման մասին որոշումներն ընդունում է Համալսարանի գիտական խորհուրդը՝ տնտեսագիտական ֆակուլտետի խորհրդի առաջարկությամբ:

II. ԱՄԲԻՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

5. Ամբիոնի գործունեությունը ղեկավարում է ամբիոնի վարիչը և վերահսկում են տնտեսագիտական ֆակուլտետի ղեկանն ու Համալսարանի ուսումնագիտական զծով պրեռեկտորը:
6. Ամբիոնը հաշվետու է Համալսարանի ռեկտորին, գիտական խորհրդին և խորհրդին:
7. Ամբիոնի կառուցվածքը և հաստիքները հաստատում է Համալսարանի հոգաբարձուների խորհուրդը:

8. Ամբիոնի հաստիքացուցակը ներառում է.
 - 1) գիտամանկավարժական կազմ՝ պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս,
 - 2) ուսումնաօժանդակ կազմ՝ լաբորանտ, ուսումնական-հետազոտական լաբորատորիայի վարիչ,
 - 3) հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերով նախատեսված գիտահետազոտական աշխատանքները համակարգող (այսուհետ՝ Համակարգող), ում հիմնական աշխատանքային գործառույթները և պարտականությունները, մասնագիտական որակական բնութագրիչները նկարագրված և սահմանված են սույն Կանոնակարգի Հավելված 1-ում,
 - 4) գիտահետազոտական աշխատանքների որակի ապահովման պատասխանատու (այսուհետ՝ Պատասխանատու), ում հիմնական աշխատանքային գործառույթները և պարտականությունները, մասնագիտական որակական բնութագրիչները նկարագրված և սահմանված են սույն Կանոնակարգի Հավելված 2-ում:
9. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական պաշտոնների զբաղեցման պայմաններն ու կարգը սահմանվում են Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգով, իսկ ուսումնաօժանդակ կազմի պաշտոնները՝ Համալսարանի կանոնադրությամբ:
10. Ամբիոնը մշակում և ընդունում է «Ֆինանսներ» և «Կառավարում» մասնագիտությունների գծով բարձրագույն և հետբուհական կրթական ծրագրերի իրականացումն ապահովող անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթ:
11. Ամբիոնը կարող է ունենալ.
 - 1) մասնագիտական լսարաններ,
 - 2) ուսումնական, հետազոտական լաբորատորիաներ,
 - 3) համակարգչային լսարաններ,
 - 4) հետազոտական այլ ստորաբաժանումներ:

III. ԱՄԲԻՈՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

12. Ամբիոնն իրականացնում է հետևյալ գործառույթները.
 - 1) բարձրագույն և հետբուհական մասնագիտական ծրագրերի մշակում և իրականացում,
 - 2) հետբուհական կրթական ծրագրերի, գիտահետազոտական նախագծերի իրականացման որակի ապահովման կառուցակարգերի մշակում և ներդրում,
 - 3) մասնագիտական կրթական չափորոշիչների հիման վրա համապատասխան մասնագիտությունների գծով ուսումնական պլանների մշակում և իրականացում,
 - 4) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլաններում նախատեսված առարկայական ծրագրերի մշակում և իրականացում,
 - 5) խորհրդատվական և սովորողների մասնագիտական առաջխաղացման նախապատրաստմանն ուղղված աշխատանքների կատարում,
 - 6) ուսանողների ուսումնաարտադրական, գիտամանկավարժական, գիտահետազոտական և այլ պրակտիկաների կազմակերպում,

- 7) Ամբիոնի գիտական, մասնագիտական ոլորտում տեսական, փորձարարական և կիրառական հետազոտական աշխատանքների կազմակերպում, նոր գիտական ուղղությունների մշակման և ձևավորման գործընթացին մասնակցություն,
 - 8) գիտամանկավարժական կադրերի պատրաստման, Ամբիոնի կազմի և մասնագետների որակավորման բարձրացման և վերաորակավորման դասընթացների կազմակերպում,
 - 9) հետազոտական կազմակերպությունների հետ պայմանագրային կապերի հաստատում,
 - 10) Համալսարանի միջազգային գիտատեխնիկական համագործակցության շրջանակներում համատեղ գիտական ծրագրերի մշակում և կենսագործում,
 - 11) մասնագիտություններին համապատասխան ուսումնական և ուսումնամեթոդական գրականության մշակման, ձեռնարկների, ուղեցույցների, ժողովածուների և գիտական մենագրությունների հրատարակման աշխատանքներ:
13. Ամբիոնն ապահովում է ուսումնական և գիտահետազոտական գործընթացների միասնությունն ու փոխկապակցվածությունը, համակարգում դասախոսների, մագիստրոսների և ասպիրանտների գիտական հետազոտությունների իրականացման գործընթացը:
14. Ամբիոնը նպաստում է Համալսարանում գիտական ներուժի զարգացմանը, դրա միջազգայնացմանը, խթանում գիտական ծրագրերում, կիրառական հետազոտություններում, նորարական նախագծերում սովորողների ներգրավումը:
15. Ամբիոնն աջակցում է Համալսարանի ուսանողական գիտական ընկերության աշխատանքներին, նպաստում դրանց արդյունավետության բարձրացմանը:
16. Ամբիոնը գործունեության տարեկան հաշվետվություն է ներկայացնում Համալսարանի գիտական խորհրդին: